

**Չարգացման Եվրասիական Բանկի կողմից իրականացվող
«ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում
տրամադրվող բիզնես վարկեր**

Վարկի ժամկետը	6-ից մինչև 60 ամիս,
Տարեկան տոկոսադրույքը	Նվազագույնը՝ 12 %.
Վարկի արժույթը	ԱՄՆ դոլար
Միջնորդավճարները	1. Վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար՝ 50'000 ՀՀ դրամ. 2. Վարկի սպասարկման միջնորդավճար՝ տարեկան 0.25% (փաստացի տրամադրված վարկի գումարի նկատմամբ).
Վաղաժամկետ մարման համար կիրառվող տույժեր	Վաղաժամկետ մարվող գումարի 1%-ի չափով
Հաճախորդի այլ ծախսեր	1. Գրավի գնահատման հետ կապված ծախսեր. 2. Նոտարական և կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր. 3. Ապահովագրության հետ կապված ծախսեր:
Վարկի նպատակները	1. Հիմնական միջոցների ձեռքբերում և արդիականացում, բիզնեսի ընդլայնում և դիվերսիֆիկացում 2. Նոր տեխնոլոգիաների ներդրում 3. Գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության զարգացում 4. Արտահանման ուղղվածություն ունեցող և ներմուծումը փոխարինող գործունեության տեսակների զարգացում 5. ՀՀ տնտեսության ոչ հումքային ոլորտներում բարձր հավելյալ արժեք ունեցող մրցունակ արտադրանքի թողարկում 6. Չարգացման Եվրասիական Բանկի անդամ-պետությունների (Ռուսաստան, Ղազախստան, Տաջիկստան, Հայաստան) տնտեսավարող սուբյեկտների միջև փոխադարձ առևտրի և ներդրումների ընդլայնում (ներառյալ՝ ապրանքների արտահանում, սարքավորումների, հումքի, ապրանքային բաղադրատարրերի, ինչպես նաև սեփական արտադրության ապրանքների և ծառայությունների մատակարարում) 7. Չարգացման Եվրասիական Բանկի անդամ-պետություններում ապրանքի ծագման հավաստագիր ունեցող արտադրատեսակների արտահանման և ներմուծման գործարքներ 8. Շրջանառու կապիտալի համալրում մինչև 5 տարի ժամկետով՝ Չարգացման Եվրասիական Բանկի ներքին նորմատիվ ակտերին չհակասող ենթաձևերի ֆինանսավորման նպատակով
Վարկավորման նվազագույն պահանջներ	1. Կազմակերպության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը վերջին 2 օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի 250-ը: 2. Միջին տարեկան կտրվածքով իրացումից հասույթը չպետք է գերազանցի 25'000'000 ԱՄՆ դոլարը կամ նախորդ օրացուցային տարվա ընթացքում ակտիվների միջին տարեկան արժեքը չպետք է գերազանցի 50'000'000 ԱՄՆ դոլարը: 3. ՓՄՁ սուբյեկտը չպետք է հանդիսանա բանկի, պետական ձեռնարկությունների, այլ առևտրային բանկերի, ֆինանսական կազմակերպությունների կամ նրանց գլխամասային ընկերությունների հետ փոխկապակցված անձ: 4. Կազմակերպությունը պետք է ունենա իրավաբանական անձի

	<p>կարգավիճակ և փաստացի իրականացվող գործունեություն, ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ թույլտվություններ, լիցենզիաներ և համապատասխան համաձայնություններ:</p> <p>5. Կազմակերպությունը և (կամ) նրա մասնակիցները պետք է ենթածրագրում կատարեն ներդրում ոչ պակաս, քան 20%-ի չափով: Եթե կազմակերպությունը նորաստեղծ է և (կամ) չունի ֆինանսավորվող ենթածրագրի գծով անհրաժեշտ փորձ, ապա պետք է կատարվի ներդրում ենթածրագրում իրականացվող ներդրումների ոչ պակաս, քան 20%-ի չափով կազմակերպության մասնակիցների կողմից:</p> <p>6. Կազմակերպությունը չպետք է ունենա վերաձևակերպված պարտավորություններ վարկի ստացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում, ընդ որում՝ պարտավորությունների վերաձևակերպումից հետո վարկի տրամադրման պահին պարտավորության մայր գումարի գծով պետք է կատարած լինի առնվազն 6 վճարում (առանց ժամկետանցումների):</p> <p>7. Դրական վարկային պատմության առկայություն (կազմակերպությունը վարկի տրամադրմանը նախորդող 2 օրացուցային տարվա ընթացքում չպետք է ունենա 90 օրացուցային օրվանից ավելի ժամկետով ժամկետանցումներ):</p> <p>8. Ենթածրագիրը պետք է համապատասխանի ՀՀ գործող օրենսդրությանը՝ շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանական պահանջների և աշխատանքային հարաբերությունների մասով:</p>
Պահանջվող փաստաթղթերի ցանկը	<p>1. Իրավական կարգավիճակի և ֆինանսական վիճակի վերլուծություն համար անհրաժեշտ փաստաթղթեր.</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնակիցների կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման արձանագրություն, ✓ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, ✓ Պետական ռեգիստրի գրանցման վկայականը (իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ ներդիրներով), ✓ տեղեկանք Պետական ռեգիստրից կանոնադրության փոփոխության և մասնակիցների վերաբերյալ, ✓ ԲԲԸ-ի և ՓԲԸ-ի դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված ռեեստրի քաղվածքը ¹, ✓ տվյալ ոլորտում աշխատելու համար անհրաժեշտ լիցենզիաները, ✓ գրանցման փաստաթղթերը, ՀՎՀՀ և այլն, ✓ ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ (անձնագրային տվյալները, սոցիալական ապահովվածության քարտ, նշանակման/ընտրության մասին հրաման/որոշում), ✓ ֆինանսական հաշվետվությունները վերջին 2 հաշվետու ժամանակա-շրջանների համար՝ հաստատված Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից, Պետական Եկամուտների կոմիտեի վերջին ստուգման ակտը, ✓ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը (առկայության դեպքում), ✓ տեղեկանքներ պարտքերի առկայության մասին (հարկային, սոցիալական ապահովագրության գծով, սպասարկող բանկերից և այլն.), ✓ գործարար ծրագիր կամ տեխնիկատնտեսական հիմնավորում, ✓ գործող պայմանագրեր և համաձայնագրեր (իրացման, մատակարարման, վարձակալության և այլն),

¹ ներկայացվում են վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման դեպքում:

	<ul style="list-style-type: none"> ✓ հաշիվ-ապրանքագրեր, ակտեր, վճարային հանձնարարագրեր կամ պահանջագրեր և այլն, ✓ դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների ցուցակ, որտեղ պետք է նշվի անվանումները, գումարների չափերը, ձևավորման և վերադարձման ժամկետները, ✓ այլ բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ վերջին 12 ամիսների ընթացքում բանկային հաշիվների շրջանառության վերաբերյալ քաղվածքներ: <p>2. Ապահովվածության փաստաթղթեր.</p> <ul style="list-style-type: none"> ✓ իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին (իրավաբանական անձ գրավատու դեպքում), ✓ գույքի ցանկը, նշելով չափման միավորը, քանակը, հաշվեկշռային արժեքը, գնահատված արժեքը և ձեռք բերման հիմքերը, ✓ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ սեփականության իրավունքի վկայականը և սեփականության հիմքերը, տրանսպորտային միջոցի դեպքում՝ տեխնիկական անձնագիրը, ✓ Բանկի հետ համագործակցող գնահատումն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից տրամադրված գնահատման հաշվետվությունը, ✓ տեղեկանք «ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական միասնական կադաստր»-ի տարածքային ստորաբաժանումից, գրավադրվող գույքի (անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, սարքավորումների) նկատմամբ սահմանափակ-կումների վերաբերյալ², ✓ տրանսպորտային միջոցի դեպքում՝ տեղեկանք ՊԱՏ վարչությունից կալանքի կամ արգելանքի մասին, ✓ այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Բանկը:
Վարկի գումարի չափը	<p>Կախված Հաճախորդի վճարունակությունից, սակայն չպետք է գերազանցի</p> <ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ գրավի արժեքի 60 %-ը • Շարժական գույքի գրավադրման դեպքում՝ գրավի արժեքի 50 %-ը • Շրջանառու միջոցների գրավադրման դեպքում՝ գրավի արժեքի 40% <p style="margin-left: 40px;">-Նվազագույնը՝ 500'000 ԱՄՆ դոլար -Առավելագույնը՝ 8'000'000 ԱՄՆ դոլար</p> <ul style="list-style-type: none"> • Տրանսպորտային միջոցի ձեռքբերման նպատակային վարկերի դեպքում՝ առավելագույնը տրանսպորտային միջոցի արժեքի 70%-ը:
Վարկի գումարի մարման արտոնյալ ժամկետը	1-ից 36 ամիս (այն դեպքում, երբ վարկը տրամադրվում է շրջանառու միջոցների համալրման նպատակով՝ 1-ից 12 ամիս)
Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցը	Անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, պատրաստի արտադրանք, շրջանառության մեջ գտնվող ապրանքներ և այլն:
Վարկի մարման կարգն ու ժամանակացույցը	Պայմանագրային

² ներկայացվում են վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման դեպքում:

Հաշվեգրված տոկոսների մարման կարգը	Ամենամսյա մարումների ժամանակացույց
Տոկոսադրույքների հաշվարկման կարգը	Տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է նվազող մնացորդի նկատմամբ:
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	Պահանջվող փաստաթղթերի ներկայացումից հետո 15 աշխատանքային օր
Ժամկետանց տոկոսագումարների գծով տույժը	0,5% օրական
Ժամկետանց վարկի գումարի գծով տոկոսները	ՀՀ ԿԲ հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկը և 0.2% օրական տույժ
Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը	Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն:
Վարկի տրամադրումը	Վարկի գումարը փոխանցվում է Հաճախորդի բանկային հաշվին
Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ պայմանները	<ul style="list-style-type: none"> • Գրավի առկայություն • Գործարար ծրագրի կամ տեխնիկատնտեսական հիմնավորման առկայություն • Անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն